



Մ Ա Յ Ր Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք Ո Ւ Մ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Հին Ձեռնագրերի Միկրոֆիլմեր.— Երևանի Պետական մատենադարանում սկսված է պատրաստությունը միկրոֆիլմերի այնտեղ պահվող արժեքավոր ձեռագրերի և հին տպագիր գրքերի և հանդեսների, Հատուկ լուսանկարչական գործիքներով կինոֆապիկների պես նկարահանվում է ձեռագիրը իր բոլոր մանրամասնություններով, էջ առ էջ: Արդեն պատրաստ են 887 թվականին գրված «Ազգայան Ավետարան»-ի և մի շարք ուրիշ ձեռագրերի միկրոֆիլմերը:

Գիտական աշխատողին տրամադրվում է ոչ թե իրական ձեռագիրը, այլ նրա նկարահանված մեկ պատճենը: Դրա առավելությունը այն է, որ ձեռագիրը այդ կերպով ավելի լայն հասարակության մատչելի է դառնում և միևնույն ժամանակ մենք էլ անաղարտ:

Մատենադարանում կազմակերպված միկրոֆիլմերի բաժինը հետզհետե նկարահանելու է այնտեղ պահվող բոլոր գանձերը: Նկարահանումից հետո ֆիլմերը պահվելու են հատկապես այդ նպատակի համար պատրաստված մետաղե փոթիկ տուփերի մեջ և գրվելու են հատուկ գրապահարանների մեջ:

Արդեն միկրոֆիլմի են վերածվել 1172 թվականին արտագրված Նդիշիի «Կարդանանց պատմություն»-ը, Մովսես Խորենացու ԺԴ դարում արտագրված «Հայոց պատմություն»-ը և 1193 թվականին գրված «Շարակնոց»-ը:

Նկարահանվել են նաև «Արևելք», «Մեղու», «Աղդարա» հայկական հին և հազվագյուտ ամսագրերի եզակի համարները: Սրանից հետո Մատենադարանը կարող կլինի, միկրոֆիլմերի միջոցով, բավարարել իր հեռավոր աշխատակիցներին:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՐՍԵՆ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՆԻՔՅՈՒՆԸ.— Հայկական Պետական հրատարակչության կողմից լույս են ընծայվել ականավոր գրականագետի երեք հարարաշունչ ուսումնասիրությունները մի սովոր հատորով, որը բաղկացած է 762 մեծադիր էջերից:

Գրքում զետեղված են «Աբովյանի ստեղծագործությունը» «Պերճ Պոռյան» և «Պարոնյանի գեղագիտական հայացքները» աշխատությունները: Գրքին կցված է անվանացանկ:

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԵՂՈՒՄՆԵՐ.— Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտն այս տարի տարբեր արշավախմբերի միջոցով շարունակում է հնագիտական պեղումներ կատարել ռեսպուբլիկայի մի շարք վայրերում:

Դվինի արշավախումբը, որը գլխավորում է դոկտ. պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, շարունակում է պեղումները երբեմնի քաղաքի միջնաբերդում և բնակելի թաղամասերում:

Հնագիտական արշավախմբերից մեկը, որը ղեկավարում է ճարտարապետության թեկնածու Կ. Հովհաննիսյանը, պեղումներ է սկսել Արին-բերդում (Էրեբունիում): Արշավախմբի արշավանքներին մասնակցում են նաև Մոսկվայի Ա. Ս. Պուշկինի անվան կերպարվեստի թանգարանը և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի Երևանի քաղաքի և ճարտարապետության բաժինը: Հնագետները այստեղ պեղում են ուրարտական քաղաք-ամրոցի՝ Էրեբունիի միջնաբերդը:

Ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Լենինգրադի պետական կոմիտեի միացյալ արշավախումբը, որին գլխավորում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բ. Պիտտովսկին, հունիսի 21-ին պեղումներ սկսեց ուրարտական բերդաքաղաք Կարմիր-բլուրում (Թեյշեբախիում):

Ինստիտուտի մի այլ արշավախումբ, պատմական գիտությունների թեկնածու Հ. Մնացականյանի ղեկավարությամբ, սկսել է իր աշխատանքները Լճաշենում, Սևանի ափին:

Շուտով կսկսեն նաև Հայաստանի հնագույն բնակավայրի՝ Ենեզավիթի պեղումները: Այդ արշավախմբի ղեկավարն է պատմական գիտությունների թեկնածու Ս. Սարգսյանը:

Հնագիտական այն արշավախումբը, որին ղեկավարելու է պրոֆ. Բ. Առաքելյանը, սեպտեմբեր ամսին պեղումներ կկատարի Դառնիի ամրոցի հրապարակի շրջակայքում, այնտեղ, ուր նախորդ տարիներին հայտնաբերվել են պալատական-գլխավոր շենքերի մնացորդները և խճանկար հատակով բաղնիքը:

Ինստիտուտի մի խումբ գիտական աշխատողներ, պատմական գիտությունների թեկնածու Ս. Բարխուդարյանի ղեկավարությամբ, զբաղվում են վիճաբանությունների հավաքմամբ և ուսումնասիրությամբ։ Ազգագրական և ժողովրդական բանահյուսության սեկտորների միացյալ արշավախումբը կուսումնասիրի Իջևանի և Նոյեմբերյանի շրջանների բնակչության կենցաղը, սովորությունները, հոգևոր և նյութական մշակույթը։

ԴԱՇՆԱԿԱՆԱՐՎԱՆՆԵՐ ԿԼԱՆ ԿԼԱՅՐԵՐՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ.— Սովետական Միության մի քանի մեծ քաղաքներում համերգներ տալուց հետո, ամերիկյան նշանավոր դաշնակահար, Չայկովսկու անվան միջազգային առաջին մրցանակաբաշխության լաուրեատ Վան Կլայբերնը այցելեց նաև Երևան։

Հուլիսի 22-ին նա ժամանեց Երևան և ավելի երկու համերգ։ Քաղաքային օդանավակայանում երիտասարդ դաշնակահարին ընդունեցին շերմորեն, թարմ ծաղկահնչեր նվիրեցին, սրտաբուխ խոսքերով դիմավորեցին։

«Ըստ վաղուց էի երազում լինել ձեր ուսուցիչի կայում, որի մասին ես դեռևս Միացյալ Նահանգներում այնքան շատ ուշադրով բաներ եմ լսել»,— հայտարարեց նա Հայաստանի հեռագրական գործակալության ներկայացուցչին։ Ապա, շարունակելով իր տպավորությունները Հայաստանի մայրաքաղաքի և հայ ժողովրդի մասին, ավելացրեց.— «Դիտելով Լենինի անվան հյուպատոսի հրապարակի հիասթափ անսամբը, զմայելով ֆիլհարմոնիայի հիանալի համերգային դահլիճով, իմ մեջ այն տպավորությունը առաջացավ, որ ես վաղուց արդեն ծանոթ եմ Հայաստանին, ճանաչում եմ նրա սիրավիթը որդիներին, դիտեմ նրա հիմնավոր մշակույթը»։

Երևանի երաժշտասեր հասարակությունը հակառակ հետաքրքրություն ցուցաբերեց զեպի ամերիկացի դաշնակահարի ելույթները։ Հիացմունքով ընդունվեցին հուշակավոր դաշնակահարի բոլոր ելույթները, յուրաքանչյուր առանձին համարի կատարումը։ Վան Կլայբերնի յուրահատուկ անկնաքանության և շունչով հնչեցրի Բախ-Լիստի Երգահանային ֆանտազիան և Սոլ մինոր ֆուգան, Լիստի Սի մինոր սոնատը, մանավանդ Ռախմանինովի Սի բեմով մինոր № 2 սոնատը, որը ավելի քան 25 տարի է Վեր չէր կատարվել Սովետական Միությունում։

Հասարակության խնդրանքով Վան Կլայբերնը կատարեց Արամ խաչատրյանի «Տոկատա դաշնամուրի համար» շատ հետաքրքիր պիեսը, որը դաշնակահարի առանձնապես սիրած ստեղծագործություններից մեկն է և հաճախ նվագում է ամերիկացի իր ունեցողիներին համար։

Կլայբերնի կատարումը անթերի է և՛ ապրումներով և՛ մեկնաբանությամբ։ «Կարծես Կլայբերնը մի միասնություն է կազմում գործիքի հետ»,—գրում է Ա. Հարությունյանը իր տպավորություններում,—«մի՛ միասնություն, որը դաշնակահարի մասնների տակ երգում է և հեկեկում, ըմբոստանում է և հրճվում»։

Կլայբերնը հանդես եկավ նաև որպես կոմպոզիտոր, նվագելով իր լիրիկական տրամադրություններով հագեցված «Հիշողություն» պիեսը։

Իր երկրորդ համերգից հետո Կլայբերնը, խորապես հուզված հանդիսականների ջերմ զգացումների ղեկավարներից, հայտարարեց. «Ըստ երբեք չեմ մոռանա հրաշալի Հայաստանը. ես միշտ հիացել եմ ձեր հին և հարուստ ֆուլկորով. ինձ նաև անչափ դուր է գալիս հայ երաժշտությունը»։

Տաղանդավոր երաժիշտը Հայաստանից բաժանվեց շատ ուժեղ տպավորություններով և խոստացավ կրկին իր այցը մոտ ապագայում։

ՎՐԱՑԻ ԱԿԱԴԵՄԻԿՈՍԸ ԶԱՅԱՍՏԱՆՈՒՄ.— Հայաստանի Պետական հրատարակչությունը վերջերս լույս էրձայնեց վրացի ականավոր գրող ակադեմիկոս Կոնստանդին Գամսախուրդիայի «Վարպետաց վարպետի աջը» պատմավեպը, որի հուղաթիվով էջերում պատմվում է եղբայրական վրաց ժողովրդի հերոսական պայքարի մասին՝ արտաքին թշնամիների, ինչպես նաև ներքին կենտրոնախույս իշխանների և նախարարների դեմ ժր դարում, Գիորգի Ա Բագրատունի թագավորի օրով։

Վեպում քնարական ջերմությամբ է նկարագրվում վրաց ժողովրդի շինարարական ոգու և անմահ մշակույթի ստեղծող վարպետներից մեկի՝ լազ Կոստանյինի Արսակիձեի մասին։ Վեպը կարգալիս հայ ընթերցողը այն տպավորություն է ունենում, ինչ տալիս են «Գեորգ Ա Բագրատունի» կամ «Վարդանանք» պատմավեպերը։

Խոսելով վրաց և հայ ժողովուրդների դարավոր եղբայրության և միասնական բախտի մասին, անվանի գրողը հայտարարեց. «Մեր հայ և վրացի ժողովուրդների բարեկամությունը այնքան հին է, որքան մեր պատմությունը. մենք նման ենք մեր բախտով և մաքառումներով, իրար հետ կապված ենք և՛ կյանքով և՛ արյունով, որ հեղել ենք օտար նվաճողների դեմ՝ մեր դարավոր պայքարում։ Հայ ժողովրդի պատմությունը ինձ հուզում է առանձնապես և ես մտադիր եմ գրել մի վեպ նրա դարավոր տառապանքների և պայքարի մասին»։ «Վարպետաց վարպետի աջը» պատմավեպի հայերեն հրատարակության առաջարկում հեղինակը հատկապես հիշում է Գաղիկ Բ-ին, որպես ծրագրված վեպի հերոսի։

ԼԵՈՑԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ.— 1940 թվականին Լեոյի անձնական գրքային ֆոնդը հանձնվեց Երևանի Մյասնիկյանի անվան պետական գրադարանին և այնտեղ պահվում է որպես մի առանձին անձնամասի հավաքածու, որը մաս չի կազմում գրադարանի ֆոնդին։

Այդ ֆոնդում հաշվվում է 4040 տպագիր միավոր, որոնց մեջ կան շատ գրքեր և հանդեսներ, ռուսերեն և օտար լեզուներով։ Այստեղ են պահվում մեծ պատմաբանի գրչին պատկանող «Հայոց պատմություն» գրքի մեծածավալ հատորները, երկհատոր «Հայոց տպագրություն»-ը, եռհատոր «Գրիգոր Արծրունի»-ն, «Խոջապական կապիտալ»-ը և այլ պատմաբանական երկեր, ուսումնասիրություններ և հղովածներ։ Կան նաև

բաղձաբերի մեծագույնը, որակաւնագիտական հոգիւններ, հուշեր, ճանապարհորդական նոթեր և այլ արժեքավոր գործեր:

Գրադարանի ֆոնդում պահպանվում են նաև լեռնի «Հայոց պատմություն» գրքի ֆրանսերեն թարգմանությունը, Բերնարդ Չարմոյի «Քուրդ ժողովրդի պատմություն»-ը (1873 թ.), Ալֆրեդ Ռամբուլի «Ընդհանուր պատմություն»-ը, Ն. Լինչի «Հայ ժողովրդի պատմություն»-ը, «Վենետիկի պատմություն»-ը (1821 թ.) և այլ բազմաթիվ արժեքավոր գրքեր, որոնք զբաղված են անդերբն կամ ֆրանսերեն լեզուներով: Կան նաև բազմաթիվ ամսագրեր, որոնց աշխատակցել է Լինչ: Գրադարանի կոլեկտիվը ձևափոխվել է եղել այդ ֆոնդի նյութերի գրադարանային մշակմանը:

ԱՐՏԱՇԱՏԻ ԲԱՏՐՈՆԸ ՌՈՍՏՈՎՈՒՄ.— Արտաշատի շրջանի Ամո հարադարանի անվան պետական թատրոնի կոլեկտիվը այնպիսիներ է տվել Ռոստովի մարզի Մյասնիկյանի անվան շրջանի Չալբի, Թոփտի, Մեծ Սալա և այլ հայկական գյուղերին, տալով հայ լեզվով ներկայացումներ: Բնադրվել են Ղ. Աղայանի «Անահիտ»-ը, Բ. Շուրի «Սատանայի Աշակերտը», Ա. Բարայանի «Սիրտը կանչում է» և այլ պիեսներ: Թատրոնի կոլեկտիվը ծրագրել է ներկայացումներ տալ նաև ուսանական ֆեդերացիայի հարավային մասում ապրող հայաշատ կենտրոններում:

ՎԱՐՊԵՏԻ ԱՐԽԻՎԸ.— Ձեռնարկվել է Ա. Իսահակյանի բնակարանը, ուր նա ապրեց և ստեղծագործեց իր կյանքի վերջին տարիներում, վերածել տուն-թանգարանի: Նրա աշխատասենյակում խնամքով պահվում են նրա ձեռագրերը՝ մեզ հայտնի երկերի սեպագրությունները, օրագրեր, ծոցատետրեր, հազարավոր պատճեններ: Նրանց մեջ կան անտիպ աշխատություններ ինչպես երիտասարդ հասակում գրած «Մասնա Մանուկը» և Դև Սուլթանը՝ դուրսագնացված՝ ուղղված թուրքական բռնակալության դեմ, որը տպագրված չէ ցարական բռնակալության դրաքնության արգելքով, իսկ հասուն տարիքում՝ վերամշակության անհրաժեշտության թելադրությամբ, «Հայկական ֆառուս», «Ղազարոսի լեզնեղը», «Հայկական ազատամարտը», «Հայաստանը 100 տարուց հետո», «Քննություն» և այլն:

Վարպետը տասնամյակների ընթացքում հսկայական նյութ է կուտակել իր վաղուց փայտյալած օրագրի կազմության համար: Իր ասելով այնտեղ մտնելու էին «այն բոլորը, որ մարդ կզգա ու կխորհի, կտեսնի ու կլսե»: Այդ օրագրի համար նա գրել է առել լավագույն լեզնեղներ, ժողովրդային երգեր, լավագույն հեքիաթներ, առակներ, առածներ, բառեր, ոճեր, բույսերի, բարերի, թռչունների անուններ, մտքեր, դիտողություններ, երազներ:

Արխիվային նյութերի հսկա քանակը ապացույց է, որ Ա. Իսահակյանը պատանեկան տարիքից դիտակցել է իր վեհ կոչմանը և իր ողջ կյանքի ընթացքում, իր բոլոր միջոցներն ու ուժերը տրամադրել է համաշխարհային դասական գրականության և փիլիսոփայության ստեղծած արժեքների ուսումնասիրությանն ու

յուրացմանը: Ընթերցումն ու խորհելը, և դրանց զուգընթաց ստեղծագործելը Վարպետի համար հոգեկան պահանջ են եղել, օգուտը միանգամայն:

Ձեռագրերում զգալի տեղ են բռնում հայկական բնաշխարհին նվիրված արտառուլ գրությունները, դիտողությունները ճշգրիտ գիտությունների՝ կենսաբանության, ֆիզիոլոգիայի, միջուկային ֆիզիկայի, աստղաբանության, բժշկության պրոբլեմների վերաբերյալ:

Այդ ձեռագրերումն է նաև հուշակալոր «Ուստա Կարո» վեպը, որն ընդգրկում է մեր շուրջ քառորդ դարու ազատագրական պայքարի պատմությունը: Այդ վեպի առաջին վարիանտը Վարպետը սկսել է և վերջացրել 1910—1912 թվականներին: Վեպում ավանդական Շիրակն է իր առաջադեմներով, ժողովրդական առողջ, զվարթ կենսափիլիսոփայությամբ և կենցաղային հյուսթալի, գունեղ պատկերներով, նուրբ հումորով: Ուստա Կարոյի պայքարը հիմնականում ուղղված է սուլթանական բռնակալության դեմ, այդ բանում նա համատեղ պայքարի է հրավիրում նաև թուրք աշխատավոր, տառապած ժողովրդին, կոչ է անում ժողովուրդների կերպարության և խաղաղ դոյակցության:

«Ուստա Կարո» վեպի երկրորդ տարբերակը անավարտ է: Հրատարակելիս պահանջվում է հմուտ և նվիրված տեքստարան-մասնագետի աշխատանք: Մինչ վեպի լրակատար ուսումնասիրումը և հրատարակությունը, մամուլում երևացին նրա ավարտված մասերից հատվածներ:

Մեծ արժեք է ներկայացնում լուսանկարչական ֆոնդը, որտեղ բազմաթիվ հասարակական-գրական գործիչների լուսանկարներ կան:

Բացառիկ տեղ են զբաղում նաև Վարպետի ստացած և գրած նամակները:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԻՆ.— ՍՍՈՒՄ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի կողմից վերջերս Մոսկվայում ուսերեն լեզվով լույս տեսավ Գ. Խ. Սարգսյանի մենագրական աշխատությունը «Տիգրանակերտ» տիտղոսով: Այդ աշխատությունը նվիրված է Արտաշիսյան հարստությունից Տիգրան Բ Մեծի հիմնած Տիգրանակերտ մայրաքաղաքին:

Տիգրանակերտը հիմնվել է մոտ 2000 տարի առաջ և քանդվել է մեր թվարկության Դ դարում: Քաղաքի պատմության միջոցով հեղինակը տալիս է հին հայկական քաղաքային համայնքի ուսումնասիրությունը, պարզելով նրա հասարակական բնույթը, քաղաքական կառուցվածքը, պետական-իրավական վիճակը:

Տիգրանակերտի պատմությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում. հենց միայն քաղաքի հիմնադրման փաստն ու նրա հետագա ճակատագիրը հայ ժողովրդի պատմության մի ամբողջ ժամանակաշրջան են բնութագրում: Ներկա աշխատությունը մեծ նպաստ է բերում հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կառուցվածքի հետազոտման գործին:

Տիգրանակերտի հիմնադրումը հնչյունաբանական քաղաքաշինության հետ է կապված և հանդիսանում է այդ հսկայական պրոցեսի շափազանց հետաքրքիր

երևույթներին մեկը՝ Տիրանակերտի հիմնադրության պատմությունը՝ զուգորդվում է Առաջավոր Ասիայի մյուս հիլլենիստական քաղաքների շինության և դրանով բացատրվում այն խոշոր առաջընթացը, որը տեղի էր ունենում Արտաշեսյան հարստության առաջին թագավորների, հատկապես Տիրանի օրով:

ՓՈԶԱՌԱԿԱՆ ՀնՁՅՈՒՆԱՐԱՆՈՒԹՅԱՆ ԼԱՐՈՐԱՏՈՐԻԱ.— Երևանի Պետական համալսարանում, Հայկական բանասիրական ֆակուլտետին կից, վերջերս բացվեց փորձառական հնչյունաբանության լաբորատորիան: Այն զգալիորեն օգնում է հայոց լեզվի հնչյունային կազմի ուսումնասիրելուն:

Փորձառական հնչյունաբանությանը դիտականները դեռևս զբաղվել են անցյալ դարում: 1890-ական թվականներին Սորբոնի համալսարանում հայ անվանի դիտական Հ. Աճառյանը փորձառական հնչյունաբանության ակնավոր ներկայացուցիչ Ռուսոյի լաբորատորիայում առաջին անգամ մի շարք հետազոտություններ կատարեց հայերենի բաղաձայնների վերաբերյալ:

Փորձառական հնչյունաբանությունը ներկայումս դարձել է ինքնուրույն գիտություն, ունի իր ուսումնասիրության առարկան, հետազոտության մեթոդները: Այն ուսումնասիրում է էլեկտրական ստիկայի նորագույն նվաճումները՝ հնչյունների, շնչերի, ինտոնացիայի հետազոտման գործում:

Համալսարանի նոր լաբորատորիան հետազոտում է արդի հայերենն ու բարբառները: Աշխատանքները ղեկավարում է համալսարանի հայոց լեզվի ամբիոնը:

Լաբորատորիան համալրվել է նոր սարքավորումներով: Վերջերս նոր մագնիսոֆոն է ստացվել Գրեկի քաղաքից: Լաբորատորիայի վարիչ Ա. Խաչատրյանի նախաձեռնությամբ ամեն օր ձայնագրվում է ուսանողների խոսքը և օգտագործվում ուսումնասիրման համար:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.—Արտասահմանում, հատկապես ժողովրդագրական կրթություն, հայոց լեզվի և գրականության ուսումնասիրումը նոր հետաքրքրություն է առաջ բերել:

Վերջերս Լեհաստանի Պրոնսկ քաղաքում և Կրակովի համալսարանում կազմակերպվեցին խմբակներ՝ հայոց լեզուն և հայ ժողովրդի մշակույթը ուսումնասիրելու համար:

Երևանի Պետական համալսարանի կապը այդ խմբակների հետ ընդարձակվում է: Օրերս Լեհաստան ուղարկվեցին մեծ թվով հայերեն դասադրեր, գիտական ժողովածուներ, ձեռնարկներ:

Կրակովի համալսարանի լեհ-հայկական բարեկամության խմբակի հրավերով Լեհաստան մեկնեց Երևանի Պետական համալսարանի գիտական մասի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների թեկնածու դոցենտ Վ. Նալբանդյանը: Մեկ ամսվա ընթացքում նա Լեհաստանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում հանդես կգա դասախոսություն-

ներով՝ նվիրված հայ գրականության պատմության, հայ և լեհ ժողովուրդների բարեկամական կապերին:

ՆՈՐ ԲԱԺԱՆՄՈՒՆԻՔ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ-ՅՈՒՄ.—Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիային առընթեր ստեղծվել է Բժշկական գիտությունների բաժանմունք, որը միավորում է ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի Լ. Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտը, Հայկական ՍՍՌ Առողջապահության մինիստրության Ռենդենոլոգիայի և օնկոլոգիայի, Կարդիոլոգիայի ինստիտուտները, ինչպես նաև ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի Ռադիոբիոլոգիայի սեկտորը:

Բաժանմունքի բյուրոյի կազմի մեջ մտնում են ՍՍՌ Բժշկական գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ Լ. Հովհաննիսյանը, Ա. Ալեքսանյանը, ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Բ. Ֆանարջյանը, ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամներ Ա. Ալեքսանյանը և Ս. Միրզոյանը:

Բաժանմունքի գիտական հիմնարկները կդրադվեն բժշկության ամենատարբեր բնագավառների մի շարք կարևոր ու հրատապ հարցերի հետազոտություններով: Կարդիոլոգիայի ինստիտուտը կկարգավորի սիրտ-անոթային սխտանի զործունեության խանգարմամբ տառապող հիվանդների պոլիկլինիկական և ստացիոնար օգնության կազմակերպումը: Այստեղ կկատարվեն նաև սրտի հիվանդությունների վիրահատական բուժում, էքսպերիմենտալ գիտական հետազոտություններ սիրտ-անոթային սխտանի պաթոլոգիայի առարկաներում:

Ռենդենոլոգիայի և օնկոլոգիայի ինստիտուտում զգալիորեն կուժեղացվեն էքսպերիմենտալ աշխատանքները շարժարկ ուռուցքների քիմիաթերապիայի ասպարեզում: Այժմ այստեղ մշակվում են մաթոնոլոգիա, օրդաններ, քաղցկեղի վաղ դիագնոստիկայի և նրա վիրահատական բուժման հարցերը: Ռադիոբիոլոգիայի սեկտորում ուսումնասիրվում են կենդանի օրգանիզմի վրա իոնացնող ճառագայթման փոքր զոդաների ներգործության, ճառագայթային հիվանդության պաթոգենեզի և այլ հարցեր:

Ֆիզիոլոգիայի ինստիտուտում հետաքրքրական աշխատանքներ են կատարվում կենտրոնական նյարդային համակարգության պաթոլոգիայի և նրա զանազան բաժինների փոխադարձ կապերի ուսումնասիրման ասպարեզում:

ԳԻՐՔ ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ.—Ստեփան Զորյանի կյանքին և գրական ստեղծագործությանն է նվիրված վերջերս Մոսկվայում ռուսաց լեզվով հրատարակված «Ստեփան Զորյան» խորագրով զրբույթը, որի հեղինակներն են Բ. Բրայնիսան և Ս. Խիտարովան: Գրքույկի ուժը գլուխներում («Այսպիսին է պատմության ճշմարիտ ընթացքը», «Իր ճանապարհով», «Ոսկի, աղետոլություն և արյուն», «Մարդ՝ դա հպարտ է հնչում» և այլն) հեղինակները փորձել են հանգամանորեն վերլուծության ենթարկել բազմաբեղուն ար-

ձակագրի կյանքի ուղին և ողջ գրական գործունեությունը:

Գրքույկը հրատարակել է «Սովետսկի պիսատել» հրատարակչությունը 2 000 օրինակ տիրաժով:

ՎԵՊ - ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԱՍԻՆ.— Հայ գրականության և մանավանդ թատերագրության մեջ տարբեր ժամանակներում փորձեր են արվել ստեղծելու Սայաթ-Նովայի գեղարվեստական կերպարը: Հրապարակի վրա է Զ. Դարյանի «Սայաթ-Նովա» պատմավեպը, որն իր ժանրային բնույթով և վիպական լայն ընդգրկմամբ մեծ քերթողին նվիրված առաջին ուշագրավ գեղարվեստական ստեղծագործությունն է:

Հրապարակված հատորը վեպի առաջին գիրքն է, որը բովանդակում է Սայաթ-Նովայի աշխարհիկ կյանքի և գործունեության միայն մի շրջանը, այն է՝

մինչև երգչի առաջին անգամ վրաց աբգունիքից արտաքսվելն ու միամյա թափառումները ներառյալ: Զ. Դարյանը բարեխղճությամբ ուսումնասիրել է Սայաթ-Նովայի ապրած ժամանակաշրջանը՝ ժԸ դարի Անդրկովկասի, մասնավորապես Վրաստանի սոցիալ-տնտեսական ու կուլտուր-բաղաձայն կյանքին վերաբերող պատմագրական աղբյուրները, հետամտ է եղել հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդների ժամանակի բարքերին, կենցաղային սովորություններին, ծանոթացել է նույն ժամանակաշրջանին վերաբերող գեղարվեստական ստեղծագործություններին և այդ բոլորից ելնելով ձգտել է դրանց ֆոնի վրա պատկերել իր հերոսներին:

Զ. Դարյանի «Սայաթ-Նովա» վեպը պատմականագրական բնույթի ստեղծագործություն է:

